ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. ապրիլի 26-28-ը Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Հովհաննես Ազիզյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Բրյուսել, Բելգիայի Թագավորություն, ապրիլի 26-28-ը, 2018թ.

4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրոպական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն Արևելյան գործընկերության «Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ» երկրորդ պլատֆորմի 18-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները՝**

   Նիստի ընթացքում քննարկվել են՝

   - Պլատֆորմի շրջանակներում անցյալ և ներկա հիմնահարցերի ընդհանուր ներկայացում,
   - «Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ» պլատֆորմի նոր կառուցվածքը և 2018-2019թթ. աշխատանքային ծրագիրը,
   - «Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ» պլատֆորմի և դրա ներքո գործող պանելների 2018-2019թթ. ռազմավարական առաջնայնությունները,
   - Կառուցվածքային բարեփոխումներ և գործարար միջավայրի բարելավում,
   - Արևելյան գործընկերության երկրների և ԵՄ միջև առևտրային հարաբերությունների ընդլայնում,
   - Թվային շուկաների ներդաշնակեցում և ազգային ռազմավարություն,
   - ԵՄ մակրոտնտեսական իրավիճակի և հեռանկարների ներկայացում,

- Կառուցվածքային բարեփոխումների գործիք. գործարար միջավայր, պետական ֆինանսների կառավարում և ֆինանսական ենթակառուցվածքներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Արևելյան գործընկերության «Տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ» երկրորդ պլատֆորմի նիստին մասնակցում էին Արևելյան գործընկերության երկրների պատվիրակությունները, Եվրոպական հանձնաժողովի Հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների, Առևտրի և Ներքին շուկայի, արդյունաբերության, ձեռնարկատիրության և ՓՄՁ հարցերով գլխավոր տնօրինությունների պատասխանատու ներկայացուցիչներ, ինչպես նաև ԵՄ երկրների և միջազգային կառույցների պաշտոնական ներկայացուցիչներ:

Նիստի ընթացքում ներկայացվեցին Պլատֆորմի նախորդ նիստից հետո Արևելյան գործընկերության հիմնական քաղաքական զարգացումների ընդհանուր պատկերը, նիստի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը՝ մասնավորապես կարևորելով նաև 2017թ. նոյեմբերին կայացած Արևելյան գործընկերության գագաթաժողովը և «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթուղթը:

Պլատֆորմի նիստի ժամանակ ներկայացվել և հաստատվել է 2017թ. նոյեմբերին կայացած Արևելյան գործընկերության 5-րդ գագաթաժողովի ժամանակ ընդունված Հռչակագրի հավելվածով հաստատված Արևելյան գործընկերության բազմակողմանի համագործակցության նոր կառուցվածքի շրջանակներում գործող «Տնտեսական զարգացման և շուկայական հնարավորություններ» երկրորդ պլատֆորմի 2018-2019թթ. աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև պլատֆորմի ներքո գործող Կառուցվածքային բարեփոխումների, ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և ՓՄՁ-ների, Առևտրի և առևտրին առնչվող կարգավորման համագործակցության և Թվային շուկաների ներդաշնակեցման հարցերով պանելների ռազմավարական առաջնայնությունները:

Քննարկվեցին կառուցվածքային բարեփոխումների գործիքին առնչվող՝ ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների գործարար միջավայրերի զարգացմանը, ՓՄՁ-ների համար բարենպաստ կարգավորիչ և տնտեսական միջավայրի ստեղծմանը, ֆինանսների մատչելիությանը, տեղական և տարածաշրջանային մակարդակներում նոր աշխատատեղերի ստեղծմանն աջակցելուն, ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների միջև առևտրի ընդլայնմանը, ինչպես նաև թվային շուկաների ներդաշնակեցմանը խթանելուն ուղղված հարցեր:

Արևելյան գործընկերության երկրների պատվիրակությունները ներկայացրեցին Կառուցվածքային բարեփոխումների գործիքի ներքո գործարար միջավայր, պետական ֆինանսների կառավարում և ֆինանսական ենթակառուցվածքներ երեք բաղադրիչների ուղղությամբ երկրների կողմից

ձեռնարկված հստակ միջոցառումները և իրականացվելիք հետագա գործողությունները, ինչպես նաև ազգային ռազմավարությունները՝ ուղղված էլեկտրոնային կառավարմանը և թվային ներդաշնակեցմանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ժամանակ հաստատվել է Արևելյան գործընկերության «Տնտեսական զարգացման և շուկայական հնարավորություններ» երկրորդ պլատֆորմի 2018-2019թթ. աշխատանքային ծրագիրը:

9. Գործուղվողը՝

Հովհաննես Ազիզյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

03.05.2018թ.